

Կ-188³-14.06.2019,11.11.2019-ՊԻ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 247-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «սույն օրենսգրքով» բառերը փոխարինել «օրենքով» բառով, իսկ «դեպքում» բառից հետո լրացնել «, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ»**

ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2018 թվականի փետրվարի 9-ի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածում՝

- 1) 1-ին մասի 1-ին կետը «դատարանին» բառից հետո լրացնել «կամ ենթակա է քննության սնանկության դատարանում» բառերով.
- 2) 5-րդ մասում «1-ին և 12-րդ կետերով նախատեսված դեպքերի» բառերը փոխարինել «12-րդ կետով նախատեսված դեպքի» բառով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Deleted: (այսուհետ՝
Օրենսգիրք). Օրենսգրքի

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և
 հարակից օրենքների նախագծերի (Կ-188-14.06.2019,11.11.2019-ՊԻ-011/1)
 վերաբերյալ ստացված առաջարկությունների

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն Երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	«Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 10-րդ հոդվածի 4-րդ կետ:	Նախագծի 10-րդ հոդվածի 4-րդ կետը հանել նախագծից:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
2.	Կառավարություն	Նախագծի 16-րդ հոդվածի 7-րդ կետ:	«Գործի վարույթը կարճելու» բառերից առաջ լրացնել «դիմումը մերժվելու կամ» բառերով:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
3.	Կառավարություն	Նախագծի 20-րդ հոդվածի 5-րդ կետ:	Փոփոխվող 20-րդ հոդվածի 5-րդ մասում 2-րդ նախադասությունը հանել:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
4.	Կառավարություն	Նախագծի 21-րդ հոդվածի 4-րդ կետ:	Լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետ. «5-րդ մասում «սույն օրենքի 31-32-րդ հոդվածներով» բառերը փոխարինել «կառավարչի	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			համար» բառերով»:		
--	--	--	------------------	--	--

5.	Կառավարություն	Նախագծի 23-րդ հոդված:	Փոփոխվող 23-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետում «1-ին մասի» բառերից հետո լրացնել «2-րդ մաս» բառերով:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
6.	Կառավարություն	Նախագծի 25-րդ հոդված:	Լրացվող 24.1-ին հոդվածի 4-րդ մասից հանել «սահմանված կարգով» բառերը:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
7.	Կառավարություն	Նախագծի 25-րդ հոդված:	Օրենքի՝ փոփոխվող 26-րդ հոդվածի 5-րդ մասում «ապահովագրական գումար» բառերը փոխարինել «ապահովագրական հատուցում» բառերով:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
8.	Կառավարություն	Նախագծի 38-րդ հոդված:	Օրենքի՝ փոփոխվող 29.2. հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «կառավարչի նկատմամբ որպես կարգապահական տույժ կիրառվել է որակավորման դադարեցումը», իսկ 7-րդ հոդվածում «առնվազն» բառը հանել:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
9.	Կառավարություն	Նախագծի 42-րդ հոդված:	Նախագծից հանել փոփոխվող 33-րդ հոդվածի 10-րդ մասը:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	
10.	Կառավարություն	Նախագծի 50-րդ հոդված:	Նախագծից հանել Նախագծի 50-րդ հոդվածի 2-րդ կետը:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
11.	Կառավարություն	Նախագծի 51-րդ հոդված:	Հոդվածը հանել Նախագծից:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

12.	Կառավարություն	Նախագծի 72-րդ հոդված:	Նախագծից հանել Նախագծի 72-րդ հոդվածի 2-րդ կետը:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
13.	Կառավարություն	Նախագծի 73-րդ հոդված	<p>Անցումային և եզրափակիչ դրույթները շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի ապրիլի 15-ին և տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հարուցված սնանկության գործերի նկատմամբ: Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը հարուցված սնանկության գործերը վարվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի նորմերով:</p> <p>2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը թույլ տրված խախտումների առնչությամբ կարգապահական վարույթ հարուցելու և տույժեր կիրառելու նկատմամբ կիրառվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի նորմերը:</p> <p>3. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ժամանակավոր կառավարիչների և կառավարիչների ընտրությունը և նշանակումը իրականացվում է սույն</p>	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			<p>օրենքով սահմանված կարգով:</p> <p>4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո սնանկության կառավարչին ներկայացվող պահանջները և կառավարչի որակավորման կարգը չեն տարածվում այն անձանց նկատմամբ, որոնք արդեն իսկ որակավորվել են, ինչպես նաև անցել կամ անցնում են ստաժավորում կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությունում:</p> <p>5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում դատարանի որոշմամբ ընդհատվում է պարտապանի միակ բնակարանի իրացումը, թե միակ բնակարանն իրացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված նվազագույն գումարից ցածր գնով:</p> <p>6. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությունը երեք ամսվա ընթացքում սահմանված անդամավճարների և այլ վճարների չափերը համապատասխանեցնում է սույն օրենքի պահանջներին:</p> <p>7. Մինչև 2020 թվականի մարտի 20-ը կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությունները:</p>		
--	--	--	--	--	--

14.	Կառավարություն	«Քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	Նախագծի 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի ապրիլի 15-ին:»:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
15.	Կառավարություն	«Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	Նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի ապրիլի 15-ին:»:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է: